ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Հայաստան, 001 Երևան, Աբովյան 16 Հեռ.՝ +374 10 56 48 53, Ֆաքս՝ +374 10 56 48 51 e-mail:armenia.artistsunion@gmail.com

03.09.2025
№43

Գյումրու Քաղաքապետ պարոն՝
Վ .Ղուկասյանին

Ք.Երևան

03/09/2025

Հարգելի պարոն Ղուկասյան
Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության, աջակցությամբ «Արվեստա» ՍՊԸ-ն ՀՀ նկարիչների միության հետ համատեղ սույն թվականի սեպտեմբերի 22-29-ը արդեն երրորդ անգամ ՀՀ-ում կազմակերպում է «Հայաստանի գույները» ակվարելի միջազգային փառատոնը:

2024 թվականին փառատոնի հիմնական միջոցառումները անցկացվել են Գյումրիում՝ ստանալով մեծ արձագանք ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

Հաշվի առնելով Գյումրու՝ արվեստի և մշակույթի կենտրոն լինելը, ինչպես նաև անցյալ տարվա դրական փորձը՝ դիտարկվում է փառատոնի հիմնական միջոցառումները (սեպտեմբերի 25-29) այս տարի ևս կազմակերպել Գյումրի քաղաքում:

Հատկանշական է , որ ջրաներկի նմանատիպ փառատոններ ամեն տարի անցկացվում են աշխարհի տարբեր քաղաքներում՝Ֆաբրիանո (Իտալիա), Մոնցա-Միլան (Իտալիա), Լիլեհոլ-Բիրմինգեմ (Անգլիա), Թբիլիսի, Մոսկվա:

Արդեն իսկ ձեռք է բերվել փառատոնին մասնակցելու պայմանավորվածություն միջազգային մեծ հեղինակություն ունեցող 12 վարպետների հետ, որոնք արվեստի այս ուղղության համաշխարհային ճանաչում ունեցող առաջատարներն են:
Ստանիսլավ Զոլադց (Շվեդիա), Լիու Ցի (Չինաստան), Չին Լի (Չինաստան),Անդի Էվանսեն (ԱՄՆ), Ալեքս Հիլկուտց (ԱՄՆ), Տատիանա Անիսիմովա (Ռուսաստան), Օլգա Լիտվիենկո (Ռուսաստան), Նիկոլաս Լոպես (Պերու), Ցեսց Ֆառռե (Իսպանիա), Ռոբերտո Զանգառելի (Իտալիա), Ջուն Հունսունգ (Հարավային Կորեա), Վիկտորյա Պրիսչեդկո (Գերմանիա), Սլավա Պրիսչեդկո (Գերմանիա),Արմեն Վանցյան (Հայաստան):

Վերոնշյալ վարպետներն ունեն մեծ լսարան և բազմաթիվ հետևորդներ, ինչն արդեն իսկ ապահովել է փառատոնին մասնակցելու նպատակով հրավիրված վարպետների հետ

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քաղաքապետության բաժին
ՍՏԱՑՎԱԾ է 03 09 2025 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ է № 13032

միասին աշխարհի տարբեր երկրներից Հայաստան և մասնավորապես Գյումրի մեծ թվով հյուրերի ժամանումը:

Այդ օրերին Գյումրի կայցելեն նաև ՀՀ գեղարվեստական ԲՈՒՀ-երի ուսանողները և դասախոսները, նկարչական դպրոցների ու նկարչական այլ ուսումնական հաստատությունների աշակերտները, ուսուցիչները, մասնավոր արտ-ստուդիաների վարպետները և ուսանողները, ինչպես նաև անհատ նկարիչներ, սիրողական ստեղծագործողներ և պարզապես արվեստը գնահատողներ:
Վարպետները Գյումրիում կանցկացնեն ցուցադրական դասընթացներ դահլիճներում և բաց երկնքի տակ, վարպետաց դասեր, պլեներներ, անհատական հանդիպում-քննարկումներ:

Փառատոնի շրջանակում կգործի տոնավաճառ, որին կմասնակցեն նկարչական պարագաներ արտադրող արտասահմանյան հայտնի ընկերություններ, ինչպես նաև ոլորտը ներկայացնող հայկական կազմակերպություններ:
Կկազմակերպվեն ժամանցային զոտիներ, նկարչական մրցույթներ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն փաստը, որ փառատոնն ունի մեծամասշտաբ և միջազգային նշանակություն ու պահանջում է ներկայացուցչական և կազմակերպչական բարձր մակարդակ՝ 2024 թ-ի փառատոնի շրջանակներում Գյումրու համայնքապետարանի հետ դրական համագործակցության փորձը ունենալով հանդերձ՝ ակնկալում ենք կազմակերպչական և ֆինանսական հարցերում Գյումրու համայնքապետարանի աջակցությունը:

Մասնավորապես՝
• 26/09/25 – 28/09/25՝ Ցուցադրական դասերի անցկացման համար դահլիճների տրամադրում (ցանկալի է՝ Գյումրու համայնքապետարանում և Ասլամազյան քույրերի թանգարանում):
• 27/09/25 – 28/09/25՝ Աբովյան փողոցում տոնավաճառի կազմակերպում, տաղավարների տրամադրում, էլեկտրական հոսանքի ապահովում:
• 28/09/25՝ Երաժշտական և պարային ծրագրի ապահովում:

Ֆինանսական մաս՝
«Հայաստանի գույները» ջրաներկի երրորդ միջազգային փառատոնի իրականացման համար նախատեսված ծախսերը կազմում են 10.968.000 ՀՀ դրամ:
Քանզի փառատոնի հիմնական մասը նախատեսվում է անցկացնել Գյումրիում, խնդրում ենք հատկացնել 2.100.000 ՀՀ դրամ Գյումրիում գտնվելու օրերին (սեպտեմբերի 25-ից 29-ը) հրավիրված 14 վարպետների/մշակույթի գործիչների/ հյուրանոցային ծախսերը հոգալու ,ինչպես նաև ընթրիք/ հյուրասիրություն/ կազմակերպելու նպատակով:

Ստորև ներկայացվում է մանրամասն հաշվարկը՝
• Հյուրանոցային ծախս՝ Սեպտեմբերի 25-ից 29-ը
14 անձ × 4 օր× 30.000 = 1.680.000 ՀՀ դրամ:

· Ընթրիքի կազմակերպում /հյուրասիրություն/
14 անձ × 3 օր × 10.000 = 420.000 ՀՀ դրամ:
Ընդամենը (սեպտեմբերի 25-ից 29-ը)՝ 2.100.000 ՀՀ դրամ:

Լիահույս եմ, որ մեր համագործակցությունը կլինի արդյունավետ՝ ստեղծելով հայ և արտասահմանցի ստեղծագործողների միջև փորձի փոխանակման հարթակ, ինչպես նաև դարձնելով Հայաստանը մշակութային զբոսաշրջության կենտրոն:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝
Հայաստանի նկարիչների միություն» ՀԿ

Նախագահ՝ Սուրեն Մելֆարյան

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ
NON-GOVERNMENTAL ORGANIZATION
02511023